ԹԵՄԱ 2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋ Է ԱՆՑՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱՎԱՁՔՈՒՄ

§ 10. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

1

Առաջին շոգեմեքենայում գլանում մխոցի վրա շոգու ճնշումը տեղի էր ունենում միայն մի ուղղությամբ, իսկ հետո գոլորշին սառչում էր և խտանում նույն գլանում: Դա հանգեցնում էր վառելիքի մեծ ծախսերի, մեքենան դարձնում էր դանդաղ գործող և անշահավետ: Վատտը որոշեց, որ շոգու խտացումը պետք է տեղի ունենա գլանին առանձին միացված անոթում, որը կապահովի շոգու հաջորդական ճնշումը մխոցի մեկ ծայրի, ապա և մյուս ծայրի վրա: Մխոցի առաջընթաց շարժումը պտտաձև շարժման վերածելու համար Վատտը օգտագործեց շարժաթև ունեցող լիսեռ և թափանիվ:

2

Նման ոչ մեծ ֆաբրիկա/գործարան կարողանում էին հիմնել և միջին կարողության տեր մարդիկ, քանի որ մեքենաների արժեքը այնքան էլ բարձր չէր և արտադրության ճիշտ կազմակերպման դեպքում արված ծախսերը փոխհատուցվում էին: Ժամանակի ընթացքում մեքենաները կատարելագործվում էին, և նրանց արժեքը գնալով բարձրանում էր: Նման դեպքերում ձեռնարկատերերը ստիպված էին լինում դրանք ձեռք բերելու համար միավորել իրենց միջոցները և ստեղծել փայատիրական ընկերություններ: Ամենաջողության դեպքում, եթե անգամ փայատիրական ընկերությունը սնանկանար, ձեռնարկատերը կկորցներ միայն իր փայաբաժինը, այլ ոչ թե ողջ ունեցվածքը: